ԿԱՐԾԻՔ

Պողոսյան Իռա Հրանտի ԺԹ.00.01 — «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնները (ըմբիշների օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից կոգնիտիվ հոգեբանության և սպորտային գիտության հետազոտություններում ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ բարձրակարգ մարզիկի հաջողությունը ֆիզիկական պատրաստվածության հետ մեկտեղ կախված է նաև հոգեֆիզիոլոգիական ու կոգնիտիվ ռեսուրսների կառավարման կարողությունից: Ըմբշամարտը, ի տարբերություն ցիկլիկ մարզաձևերի, պարտադրում է մշտական անորոշության, կոնտակտայնության ու ժամանակային ճնշման պայմաններում ակնթարթային որոշումներ կայացնելու կարողություն, ինչն այս ոլորտի հոգեբանական ուսումնասիրությունը դարձնում է հատկապես արժեքավոր: Ատենախոսությունն ուղղված է հենց այս բացի լրացմանը՝ առաջ քաշելով ըմբիշների մրցակցային որոշման կայացման բազմագործոն մոդել:

Ատենախոսի կողմից հատուկ ուշադրության արժանի է բազմամեթոդ մոտեցումը, որն ինտեգրում է հոգեֆիզիոլոգիական (ռեակցիայի արագություն, ՇՕՌ մեթոդ), անձնային (որոշման կայացման ոճեր, հուզական կայունություն) և կոգնիտիվ (մետակոգնիտիվ ռազմավարություններ) ցուցանիշները՝ ձևավորելով արդյունավետ կանխատեսողական մոդել, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ անմիջական կիրառական արժեք հայկական ըմբշամարտի ազգային հավաքականների և մարզական դպրոցների համար:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, ծավալուն գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված են նպատակը, օբյեկտն ու առարկան, հետազոտական խնդիրները, ինչպես նաև վարկածն ու ենթավարկածները, ներկայացված են մեթոդաբանական հիմքերը, տեսական ու կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը ներկայացնում է որոշման կայացման տեսական դաշտի համակողմանի ակնարկ՝ ընդգրկելով դասական և ժամանակակից մոտեցումները Ֆոն Նեյմանից մինչ Կաֆ Ման, Կանեման, Կլայն, Գիգերենցեր: Ատենախոսն ընդհանուր առմամբ ճիշտ կերպով բացահայտում է, թե ինչպես է կրկնակի մշակման տեսությունն ու բնական որոշումների կայացման մոտեցումն անմիջականորեն կիրառելի ըմբշամարտի հոգեբանության համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլուխը («Ըմբշամարտում որոշման կայացման հոգեբանական առանձնահատկությունները») մանրամասն ներկայացնում է ըմբշամարտի հոգեբանական կառուցվածքը, որոշման կայացման ժամանակային տիպաբանությունը (օպերատիվ-մարտավարական, մարտական-իրավիճակային, ռազմավարական) և ըմբիշների արդյունավետության վրա ազդող բազմաշերտ գործոնները: Հատկապես կարևոր է «հևրիստիկ ռազմավարություններ ըմբշամարտում» բաժնի ներկայացումը, որն ատենախոսի ինքնուրույն ներդրումն է թեմայի բացահայտման գործում:

Ատենախոսության երրորդ գլուխը ներկայացնում է 60 բարձրակարգ ըմբիշի (30 միջազգային և 30 հանրապետական մակարդակի) և 15 փորձագետ մարզչի ներգրավմամբ կատարված փորձարարական հետազոտությունը: Ստացված արդյունքների ներկայացումն ու վերլուծությունը, ինչպես նաև կիրառված SPSS 26.0 ծրագրաշարով կատարված բազմամեթոդ վիճակագրությունը (կորելյացիոն, գործոնային, կլաստերային, ռեգրեսիոն, դիսպերսիոն) ընդհանուր առմամբ կատարված են գիտական ճշգրտությամբ:

Փորձարարական ճանապարհով ի հայտ է բերվել, որ՝ հոգեֆիզիոլոգիական ցուցանիշներից բարդ ռեակցիան ու ՇՕՌ-ի ճշտությունն ամենաուժեղ կանխատեսիչներն են, սակայն միջազգային ըմբիշների առավելությունն այս ցուցանիշների ոչ թե ուղղակի արժեքի, այլ համակարգային կիրառման մեջ է: Ատենախոսը նաև արձանագրել էմետակոգնիտիվ գործառույթների թերությունը դրսևորվում է կրկնվող մարտավարական սխալներով, ինչն ի հայտ է բերում այս ոլորտում նպատակաուղղված մարզումային ներդրման կարևորությունը: Գնահատելի է ներկայացված տասներկուշաբաթյա ինտեգրատիվ ծրագիրն արդյունավետ է ապացուցել առանց հատուկ սարքավորումների, ինչն ավելացնում է դրա կիրառական նշանակությունը:

Իռա Հրանտի Պողոսյանի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է՝ շարադրված գրագետ գիտական լեզվով և ոճով: Այն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն և կարող է հիմք հանդիսանալ ինչպես ընբիշների, այնպես ել մենապայքարային այլ մարզաձևերի մարզիկների հոգեբանական պատրաստության գործընթացում:

Անդրադառնանք մեր կողմից ատենախոսության մեջ նկատված որոշ դիտողությունների ու ցանկությունների.

1 . Հոգեֆիզիոլոգիական ենթահամակարգի պաշտպանության համար ներկայացված երկրորդ դրույթը այն է, որ որոշումների կայացման արդյունավետության ամենահզոր կանխատեսող գործոններն են բարդ շարժողական ռեակցիաները և շարժվող օբյեկտի նկատմամբ հակազդումների ճշգրտությունը, սակայն միջազգային մակարդակի ըմբիշների առավելությունը կայանում է այս գործընթացների համակարգված գործունեության և իրավիճակային հարմարվողականության արդյունավետության մեջ: Դրույթի այս պնդման էությունը ուրվագծվում է ընդհանուր առմամբ՝ համեմատած ամբողջական ու տրամաբանորեն շարադրված ատենախոսության երկրորդ եզրակացության հետ:

2. Մեկ հանգամանք պարզաբանման կարիք ունի. մոդելավորման բաղադրիչը վերլուծելիս գրանվել է, որ այն ցույց տվեց ամենամեծ էֆեկտի չափը (նկար 5-ում), հեղինակը նշում է, որ սա համարվում է «մեծ» էֆեկտ: Սակայն «մեծ» եզրույթը դրված է չակերտների մեջ, ինչը նշանակում է, որ այս արժեքը պետք է համարել փոքր: Արդյո՞ք այս մեկնաբանությունը ճիշտ է:

3. Ատենախոսության 115 էջում ներկայացված է արդյունավետ որոշումների կայացման կորելյացիոն մոդել, որտեղ արտացոլված է մոդելի չորս հիմնական բաղադրիչների, դրանց բաղադրիչ գործոնների և կենտրոնական ինտեգրատիվ մոդելի միջև փոխհարաբերությունների համակարգը: Սակայն, մոդելի գրաֆիկական ներկայացումը ուսումնասիրելիս տեսնում ենք, որ երեք գույներով ընդգծված են միայն երեք բաղադրիչներ: Սա առաջացնում է չորրորդ բաղադրիչի վերաբերյալ հարցը: Ինչու՞ է այն ընդգծված չէ նկարում: Արդյո՞ք ճիշտ չեր բացի կորելյացիոն վերլուծության պատկերումից ձևավորեիք նաև ,,Մոդելի,, սխեմատիկ և ակնառու կառուցվածք:

4. Հետազոտության գործընթացում իրականացվել է թվով 30 մասնակիցների երկու խմբերի բաժանում, յուրաքանչյուր ենթաընտրանքը 15 հոգանոց խմբերով, որոնք պետք է կատարեին տնային վարժություններ: Արդյո՞ք քիչ չեր ենթա ընտրանքի 15 թիվը:

5. Աշխատանքում առկա են սակավաթիվ տերմինաբանական սխալներ, օրինակ101 էջում ,,Նեյրոնային հետազոտություններ, 103 էջում ,,նախահատակագլխային կեղև,, 110 էջի աղյուսակ 6-ում ,,հոգեհասարակական շեղում, և այլն:

Նշենք, որ նշված դիտողությունները, առաջարկները և նկատառումները մասնավոր բնույթի են և ամենևին չեն անդրադառնում Ի. Հ. Պողոսյանի ատենախոսության գիտական արժեքի և նորույթի վրա: Հեղինակի հրատարակած յոթ հոդվածները, այդ թվում 2-ը ՄԳՇ լիովին արտացոլում են հետազոտված հիմնախնդիրը,

ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Պողոսյան Իռա Հրանտի ԺԹ.00.01 — «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնները (ըմբիշների օրինակով)» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Որպես ավարտուն գիտական աշխատանք՝ այն իր բնույթով նորություն է և կարևոր նշանակություն ունի հոգեբանության, մասնավորապես սպորտային հոգեբանության բնագավառում: Գտնում ենք, որ ատենախոսության հեղինակ Պողոսյան Իռան միանգամայն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգաբնական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր՝

Արսեն Բաղդասարի Լոքյան _____

Ա.Բ. Լոքյանի ստորագրությունը հաստատում եմ.

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝

բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

ք. Երևան, 08.06. 2026